ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն ամենը, ինչ պետք է իմանաք ինքներդ ձեզ և ուրիշներին պաշտպանելու համար

Կալիֆորնիայի Արդարադատության նախարարությունն ունի տեղական, նահանգային և դաշնային իրավապահ մարմիններին ատելության հիմքով հնարավոր հանցագործությունների քննության մեջ աջակցելու և օժանդակելու գործիքներ և ռեսուրսներ, ներառյալ այդ հանցագործությունները կատարողների բացահայտումը, ձերբակալումը, հետապնդումը և դատապարտումը:

Կալիֆորնիա նահանգի գլխավոր դատախազ Ռոբ Բոնտան ներկայացնում է ատելության հիմքով հանցագործությունները բացահայտելու և հաղորդելու և ատելության հիմքով հանցագործություններից տուժածներին հասանելի ծառայությունների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը:

Ինչպե՞ս տարբերել ատելության հիմքով կատարված հանցագործությունը:

Ատելության շարժառիթով կատարված հանցագործության նշաններն են.

- Իրավախախտը թիրախավորել է տուժողին կամ սեփականությունը, քանի որ նա պատկանում է պաշտպանված խմբի, ինչպես օրինակ՝ կրոնը կամ սեռը:
- Իրավախախտը հայտնել է կանխակալ վերաբերմունք արտահայտող գրավոր կամ բանավոր մեկնաբանություններ:
- Հանցագործությունը կատարվել է տուժածի կամ իրավախախտի պաշտպանված խմբի համար կարևոր օրը:
- Տարածաշրջանում կազմակերպված է ատելության հիմքով կատարվող գործողություն:

Եթե դուք ատելության հիմքով հանցագործության զոհ եք դարձել.

- Անմիջապես դիմեք տեղական իրավապահ մարմնին:
- Դիմեք բժշկական օգնության (եթե անհրաժեշտ է):
- Ճշգրտությամբ գրառեք այն ամենը, ինչ ասվել է:
- Գրառեք մյուս բոլոր փաստերը:
- Պահպանեք բոլոր ապացույցները (օր.՝ գրաֆիտի, ձվի կճեպներ, տուժածի մեքենայի վրա արված գրառումներ): Եթե ապահով է, սպասեք մինչև իրավապահները ժամանեն և լուսանկարեն:
- Վերցրեք մյուս տուժածների ու վկաների անունները, հասցեները, հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեները:
- Փորձեք որևէ ականատեսից ստանալ հանցագործի կամ մեքենայի նկարագրությունը:
- Կապվեք ատելության հիմքով կատարված հանցագործություններով զբաղվող տեղական համայնքային կազմակերպությունների հետ:

Այն, ինչ դուք և ձեր համայնքը կարող եք անել

- Դատապարտեք ատելությունը և անհանդուրժողականությունը:
- Տուժածներին աջակցելու համար կազմակերպեք համայնքային ժողովներ:
- Օգնություն առաջարկեք տուժածներին:
- Խնդրեք պաշտոնատար անձանց դատապարտել ատելության հիմքով հանցագործությունները:
- Ստեղծեք մարդկային հարաբերությունների հանձնաժողով կամ ատելության հիմքով հանցագործությունների ցանց, որը կներառի իրավապահ մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, դպրոցները, կրոնական կազմակերպությունները և համայնքային կազմակերպությունները: Խնդրեք նրանց անմիջապես արձագանքել ատելության հիմքով կատարված հանցագործություններին և խթանել դրանց կանխարգելումն ու իրազեկումը:

Ատելության հիմքով հանցագործությո՞ւն, թե՞ ատելության հիմքով միջադեպ

Կարևոր է իմանալ ատելության հիմքով հանցագործության և ատելության հիմքով միջադեպի միջև տարբերությունը:

Ատելության հիմքով հանցագործությունը հանցագործություն է որևէ անձի, խմբի կամ սեփականության նկատմամբ, որի դրդապատճառը պաշտպանված այս կամ այն սոցիալական խմբին զոհի իրական կամ թվացյալ պատկանելությունն է: Ատելության հիմքով հանցագործությունները կարող են դատական կարգով քննվել որպես ոչ մեծ ծանրության կամ ծանր հանցագործություններ՝ կախված կատարված գործողություններից:

Կալիֆորնիայում հնարավոր է դառնաք ատելության հիմքով հանցագործության զոհ, եթե դուք թիրախավորվել եք ձեր իրական կամ թվացյալ բնութագրիչների պատճառով, որոնք են.

- Ռասայական կամ էթնիկական պատկանելությունը,
- Ազգությունը,
- Կրոնը,
- Սեռական պատկանելությունը,
- Սեռական կողմնորոշումը,
- Ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամությունը, կամ
- Առնչությունը այս «իրական» կամ «թվացյալ» բնութագրիչներից մեկը կամ մի քանիսն ունեցող որևէ անձի կամ խմբի հետ:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ վերոնշյալ բնութագրիչները օրինակներ են, և գոյություն ունեն պաշտպանված սոցիալական խմբի իրական կամ թվացյալ բնութագրիչների այլ դրդապատճառներ:

Եթե դուք ատելության հիմքով հանցագործության ականատես եք դարձել, հաղորդեք այդ մասին տեղական իրավապահ մարմնին:

Ատելության հիմքով միջադեպը ատելության շարժառիթով կատարվող գործողություն է կամ դրսևորվող վարքագիծ, որը սակայն իրավականորեն պաշտպանված է Սահմանադրության Առաջին փոփոխությամբ սահմանված ինքնարտահայտման ազատության իրավունքով: Եթե ատելության հիմքով միջադեպը սկսում է վտանգ ներկայացնել մարդու կամ սեփականության համար, այն կարող է դառնալ ատելության հիմքով հանցագործություն:

Ատելության հիմքով միջադեպերի օրինակներ են.

- Հայհոյանքը,
- Վիրավորանքը,
- Ձեր սեփականության վրա ատելություն պարունակող նյութերի ցուցադրումը,
- Ատելություն արտահայտող նյութ փակցնելը, որի արդյունքում սեփականությունը չի վնասվում,
- Ատելության ուղերձներ պարունակող նյութերի տարածումը հանրային վայրերում:

Որտեղ ստանալ օգնություն:

Զանգահարեք 911 կամ գնացեք տեղական հիվանդանոց, եթե անհապաղ միջոցներ է պետք ձեռնարկել: Ակտ կազմելու համար դիմեք ձեր տեղական իրավապահ մարմնին:

Կալիֆորնիայի Գլխավոր դատախազի գրասենյակի Տուժածների սպասարկման ստորաբաժանումը

հանցագործությունից տուժածներին և նրանց ընտանիքներին առաջարկում է աջակցություն և տեղեկատվություն ամբողջ քրեական գործընթացում: Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք (877) 433-9069 կամ այցելեք oag.ca.gov/hatecrimes:

Կալիֆորնիայի Արդար աշխատանքի և բնակարանային հարցերով վարչությունը (DFEH)

պետական մարմին է, որը պատասխանատու է Կալիֆորնիայի քաղաքացիական իրավունքների օրենսդրության կիրառման և աշխատանքի, բնակարանային ապահովման և հասարակական վայրերում մարդկանց անօրինական խտրականությունից, ատելության հիմքով բռնությունից և թրաֆիքինգից պաշտպանելու համար: DFEH-ն ընդունում է իրական կամ թվացյալ պաշտպանված սոցիալական խմբի՝ ատելության հիմքով բռնության կամ ատելության հիմքով բռնության սպառնալիքից տուժածների կողմից ներկայացված հայցերը: Հայց ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք dfeh.ca.gov:

Տեղական Շրջանային դատախազի գրասենյակի Տուժածների/Ականատեսների աջակցման կենտրոնը

բոլոր շրջաններում տուժածներին աջակցելու համար անմիջականորեն համագործակցում է Կալիֆորնիայի Տուժածների փոխհատուցման հարցերով զբաղվող խորհրդի հետ (CalVCB): Տեղական գրասենյակի և ռեսուրսների մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք victims.ca.gov/victims/localhelp.aspx:

ԱՄՆ Արդարադատության նախարարության Համայնքային հարաբերությունների ծառայությունը

համագործակցում է համայնքային խմբերի հետ՝ համայնքային հակամարտությունները լուծելու և ատելության հիմքով ենթադրյալ հանցագործությունները կանխելու և դրանց հակազդելու նպատակով: Տեղեկատվություն ստանալու համար այցելեք justice.gov/crs:

OAG.CA.GOV/HATECRIMES

Տեղեկատվություն տուժածների համար:

Կալիֆորնիայի Տուժածների իրավունքների օրենքը՝ հայտնի որպես Մարսիի օրենք, ձեզ շնորհում է հետևյալ կենսական իրավունքները.

- **Գումար ստանալ ձեր կրած կորուստների համար:** Հայցեք գումար՝ ձեր սեփականության կորուստը, բժշկական ծախսերը, կորցրած աշխատավարձերը և այլ կորուստները ծածկելու համար:
- **Ներկայացնել, թե ինչպես է հանցագործությունն ազդել ձեզ վրա:** Դատարանին ներկայացրեք, թե ինչպես է հանցագործությունն ազդել ձեր կյանքի վրա՝ նախքան ամբաստանյալի դատավճիռը կայացնելը:
- **Քրեական գործի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն:** Դատախազից խնդրեք գործի վերաբերյալ տրամադրել որոշակի տեղեկատվություն:
- **Դատարանից ստանալ հրամաններ:** Դատարանը կարող է պաշտպանական հրաման արձակել ամբաստանյալին ձեզանից հեռու պահելու կամ փաստաբանի վարձավճար վճարելու մասին, եթե ձեր գործին օգնելու համար փաստաբան եք վարձել: Դատարանը կարող է նաև ամբաստանյալին պարտավորեցնել ձեզ վճարել 25,000 ԱՄՆ դոլար կամ ավելին՝ ձեր քաղաքացիական իրավունքները ոտնահարելու համար: (Փաստաբանի հետ քննարկեք Ռալֆի և Բեյնի ակտերով սահմանված ձեր իրավունքների մասին):
- Կալիֆորնիայի օրենսդրությունն արգելում է իրավապահ մարմիններին տեղեկատվություն հայցել անհատներից իրենց ներգաղթի կարգավիճակի մասին, այդ թվում նրանցից, ովքեր հաղորդում են տալիս կամ հնարավոր հանցագործությունների զոհ են, եթե այդ տեղեկատվության ստացումը նպատակաուղղված չէ տուժածին U վիզայի (հանցագործությունից տուժածի վիզա) կամ T վիզայի (մարդկանց թրաֆիքինգից տուժածի վիզա) տրամադրումը հաստատելու համար:

Այս հրապարակումը ֆինանսավորվել է 2018 թ. Հանցագործությունից տուժածների մասին ակտի (VOCA - Victims of Crime Act) դաշնային ֆոնդերի կողմից, ֆինանսավորման համարը՝ VT20199504, Կալիֆորնիայի նահանգապետի արտակարգ իրավիճակների գրասենյակի (CalOES) միջոցով:

Rev 3-2021 <Armenian>